

Արցախեան Ահազանգ...

Անգամ մը եւս Արցախ կ'արինի, երբ կը կարծուէր որ գոնէ Յունուար 12ի Գերագոյն Սովետի Նախագահութեան ծանօթ շոնթալից որոշումէն ետք, նո՛ր դարաշրջան մը բացուած էր Մարզին բնակչութեան համար, տասնամեակներ երկարող մարդկային, ազգային եւ տնտեսական բռնաբարումներէ եւ զրկանքներէ ետք ազերի իշխանութիւններուն կողմէ:

Արցախի, եւ անոր հետ Հայաստանի եւ գաղթաշխարհի հայը դարձեա՛լ արդեօք զոհը դարձաւ իր միամտութեան: Անգա՛մ մը եւս, հայը խաբուեցաւ սին խոստումներով եւ խաբեպատիր որոշումներով:

Ի՞նչ խաղ կը խաղայ Մոսկուա: Ի՞նքն է, որ կը ղեկավարէ Արցախը թէ՛ Պաքուն, դիմակաւորուած՝ «Կառավարման Յատուկ Կոմիտէ» պիտակով:

Վերջին երկու շաբաթներուն Արցախի ներքին կացութիւնը ճշդիւ կերպով կը յիշեցնէ անցեալ տարուան խռովալի վիճակը, երբ Մոսկուա մերժած էր Արցախի մարդկօրէն, ազատօրէն եւ առանց ատրպէյճանական ճնշիչ թաթին ապրելու պահանջը: Հիմա ազգամիջեան կռիւները եւ արինալի բախումները վերսկսած են, ճարահատ ժողովուրդը կրկին դիմած է գործադուլի, եւ հայ աշակերտը դարձեալ դպրոց չ'երթար: Իսկ միւս կողմէ խորհրդային զօրքերը քիչ մը աւելի եւս կը խստացնեն իրենց ծանր ներկայութիւնը, որմէ օգտուողը հայը չէ երբեք:

Կարդացէք «Պաշար»ի այս թիւով Արցախի հարազատ ներկայացուցիչներուն եւ հայ Համայնավար ղեկավարներուն բաց նամակը ուղղուած Կորպաշովին եւ սրտանմլիկ գիրը՝ ուղղուած Հայաստանի կառավարութեան եւ հայ ժողովուրդին: Դարձեալ անդունդի եզրին գտնուող անձերու օգնութեան աղաղակն է, որ կը լսուի իրենց կոչին ընդմէջէն: Հայաստանին՝ որ ծունկի եկած է երկրաշարժի համատարած աւերէն ետք, Հայաստանի ժողովուրդին՝ որուն 13 ներկայացուցիչները կը գտնուին Մոսկուայի բանտին մէջ սպասելով իրենց արդար դատավարութեան, որուն մասին պաշտօնական շրջանակները կը պահեն քար լուծիւն:

Ի՞նչ կ'ըսեն նամակագիրները, որոնց մէջ կը գտնուին Գերագոյն Սովետի նորընտիր երեք երեսփոխանները, շրջաններու եւ քաղաքներու առաջին քարտուղարներ եւ, մանաւանդ՝ «Յատուկ Կառավարման Կոմիտէ»ի երեք անդամները, անոնք՝ որոնք կը վայելեն Մոսկուայի ամբողջական վստահութիւնը եւ որոնց «հաւատարմութեամբ»ը երաշխաւորուած էր անոնց անդամակցութիւնը Կոմիտէին:

Նամակագիրները կ'ըսեն թէ Կառավարման Յատուկ Կոմիտէն, գլխաւորութեամբ անոր նախագահ Արքատի Վոլսկիի «երկակ խաղ» կը խաղան, «ապօրինի գործունէութիւններու» կը ձեռնարկեն Կովկասի ծանօթ փոխարքաներու կամակորութեամբ, ընկերային զարգացումները եւ բնակարանային եւ ճամբաներու շինարարութիւնները կ'ըլլան ատրպէյճանական գիղերուն համար, որոնք կը շրջապատեն Ստեփանակերտը, Պաքու միշտ ներկայ է Արցախի ծրագիրներուն մէջ մինչ Հայաստան՝ բացակայ է: «Նոյնիսկ կառավարման յատուկ ձեւ մտցնելը, Մարզին չփրկեց Ատրպէյճանի կոպիտ, անպարկեշտ միջամտութենէն», ընդհակառակը այդ Կոմիտէն լծուած է Արցախը «ինթենսիւ ատրպէյճանականացնելու դիրքերու վրայ»: Միշտ կը տիրէ նաեւ խտրական քաղաքականութիւնը:

Միւս կողմէ, Ատրպէյճանի կուսակցապետ Վեգիրով հրապարակաւ եւ բազմիցս յայտարարած է, որ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խնդիրը լուծուած է վերջնականապէս եւ անվերապահօրէն», իր յայտարարութիւնները հիմնաւորելով Կորպաշովի հետ իր տեսակցութիւններէն ետք:

Իրերու այս կացութեան դիմաց, Արցախցին դարձեալ մինակ է եւ առանձնացած, ու ինքզինք այնքան վտանգուած կը զգայ, որ կ'ահազանգէ՝ «խաղաքարտի վրայ է դրուած մեր ժողովուրդի ճակատագիրը, գուցէ վաղը ուշ լինի»: Ու որպէս միակ փրկարար ելք, դարձեալ կը պահանջուի Մարզին միացումը Հայաստանի:

Բացորոշ է, որ թէ՛ Մոսկուա եւ թէ՛ Պաքու կ'օգտուին բնութենէն հարուածուած Հայաստանի եւ հայ ժողովուրդի ամենատկար պահէն: Ասիկա պատճառ մը պէտք չէ ըլլայ, սակայն, հայ ժողովուրդը մղելու յուսահատութեան, ապա զայն մեղադրելու համար «ծայրայեղականութեամբ», «հակամիջազգայնութեամբ» եւ խորհրդային զինարանին մէջ գտնուող այլ բութ ածականներով:

Ե՛րբ, ի վերջոյ, Քրեմլինի մէջ պաշտօնավարող ղեկավարները պիտի հասկնան թէ Արցախը հայուն համար այն է, ինչ որ են Երեւանը եւ Արարատը, թէ առանց անոնց, հայը կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը, իր յարատեւելու կոռուանները, իր հոգեկան թէ ֆիզիքական ենթահողը:

Ժամանակն է, որ Մոսկուա վար դնէ իր խաղաքարթերը եւ յստակօրէն ճշդէ իր դիրքը, ստանձնելով իր «վերակառուցման» պարտաւորութիւնները, եթէ երբեք այդ բոլորն ալ սուտ ու փուն խօսքեր չեն, ինչ որ էին 70 տարիներէ ի վեր արձակուած եւ մեր ականջներուն թմբուկները խլացնող բոլոր խարդախ լոզունգները: